

Հանրապետության ջրային պաշարները սահմանափակ են և տարեկան կազմում են ընդամենը 8.5 մլրդ.մ³, որից 6.54 մլրդ.մ³-ը մակերեսային հոսքն է: Հայաստանի գետերը հիմնականում լեռնային են, խիստ արտահայտված մեծենային (սակավաջուր) հոսքերով:

ՀՀ տարածքում գտնվում են քաղցրահամ լճեր և ջրամբարներ՝ մոտ 38.52 մլրդ.մ³ ընդհանուր ծավալով, որի մոտ 95%-ը կազմում է աշխարհի ամենաբարձրադիր լեռնային լճերից մեկը՝ Սևանը, որը գտնվում է ծովի մակերևույթից 1900.2 մ բարձրության վրա, լճի ջրային պաշարները 2011թ. կազմել են մոտ 37.8 մլրդ.մ³:

Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Լիճն անտնտեսվար և անխնա օգտագործումից խիստ տուժել է և ջրային պաշարները զգալիորեն նվազել են: Լճի մակարդակի իջեցման, ինչպես նաև լիճ թափվող անբավարար մաքրված հոսքաջրերի հետևանքով, կտրուկ վատացել էր նաև ջրի որակը: Իրավիճակը մասնակիորեն մեղմացնելու և Սևանի ջրային պաշարներն Արփա գետի ջրերով ավելացնելու նպատակով 1981թ. կառուցվել է 48կմ 420մ երկարությամբ «Արփա-Սևան» թունելը, որը լճի հետ միանում է 850 մ երկարությամբ բաց ջրանցքով: Լճի պահպանության վերջին տարիների համալիր միջոցառումներն արդյունավետ իրականացնելու շնորհիվ, զգալիորեն բարձ-րացել է ջրի մակարդակը (Սևանա լճի մակարդակը 2011թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 1 900.47 մ):

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հայաստանի Հանրապետության պետական անկախության հռչակագիրն ընդունվել է 1990թ. օգոստոսի 23-ին, իսկ անկախության հռչակման հանրաքվեն անց է կացվել 1991թ. սեպտեմբերի 21-ին: Նույն թվականի դեկտեմբերի 21-ին Հայաստանը դարձել է ԱՊՀ անդամ, 1992թ. մարտի 2-ին՝ ՄԱԿ-ի անդամ, 2001թ. հունվարի 25-ին՝ Եվրախորհրդի անդամ, իսկ 2003թ. փետրվարի 5-ին՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ:

Պետական լեզուն հայերենն է, որը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, ազգային արժույթը՝ դրամն է, որը շրջանառության մեջ է դրվել 1993թ. նոյեմբերին:

Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է (ՀՀ Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 1):

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Հանրապետության նախագահը երկրի անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է: Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով (ՀՀ Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 2):

Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա (ՀՀ Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 5):

ԼԵՌՆԱԳԱԳԱԹՆԵՐԸ

Անվանումը	Տեղանքը	Բարձրությունը ծովի մակերևույթից, մ
Արագած	Արագածի լեռնազանգված	4 090
Կապուտջուղ	Զանգեզուրի լեռնաշղթա	3 906
Աժդահակ	Գեղամա լեռնաշղթա	3 598
Սպիտակասար	Գեղամա լեռնաշղթա	3 555
Իշխանասար	Ղարաբաղի բարձրավանդակ	3 552
Վարդենիս	Վարդենիսի լեռնաշղթա	3 522
Արամասար	Բարգուշատի լեռնաշղթա	3 392
Բաղացասար	Մեղրու լեռնաշղթա	3 250
Խուստուփ	Խուստուփ-Կատարի լեռնաշղթա	3 214
Լեզլի	Ջավախքի լեռնաշղթա	3 157
ԳոԳի	Վայքի լեռնաշղթա	3 113
Թեժ լեռ	Փամբակի լեռնաշղթա	3 101
Մեծ Եղնախաղ	Եղնախաղի լեռնաշղթա	3 042
Բովաքար	Հայաբի լեռնաշղթա	3 016
Միափոք	Միափոքի լեռնաշղթա	2 993
Ուրասար	Բազումի լեռնաշղթա	2 993
Քաջաթաղ	Սևանի լեռնաշղթա	2 901
Արայի լեռ	Արայի լեռնազանգված	2 577

ԽՈՇՈՐ ԳԵՏԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԻԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ¹

Գետերի անվանումը	Երկարությունը, կմ	Միջին թեքությունը, %	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²	Միջին տարեկան ելքը, մ ³ /վրկ	Միջին տարեկան հոսքը, մլրդ.մ ³
Ախուրյան	186	5.7	9 650	21.2	0.67
Արաքս ²	158	-	22 100	81.3	2.56
Դեբեդ	154	11.0	3 790	34.0	1.07
Հրազդան	141	7.6	2 560	26.0	0.82
Որոտան	111	21.0	2 000	19.7	0.62
Արփա	92	24.0	2 080	13.0	0.41
Քասախ	89	29.0	1 480	3.35	0.11
Փամբակ	84	13.0	1 370	11.4	0.36
Ադսուն	81	31.0	1 730	9.71	0.31
Զորագետ	67	22.0	1 460	15.6	0.49
Գետիկ	58	29.0	586	3.63	0.11
Վեդի	58	33.0	633	1.84	0.06
Արգիճի	51	12.0	384	5.49	0.17
Գավառագետ	50	25.0	480	3.44	0.11
Մարիկ	45	22.0	685	3.24	0.1
Ողջի	43	68.0	788	11.0	0.35
Ազատ	40	31.0	572	4.88	0.15
Մեղրի	36	63.0	336	2.89	0.09

¹ Տրամադրվել է Հայաստանի հիդրոոլեքնոլոգիայի և մոնիտորինգի պետական ծառայության (ՊՈԱԿ) կողմից: Այն գետերի համար, որոնք դուրս են գալիս հանրապետության սահմաններից, տվյալները բերված են հանրապետության սահմանների մասով:

² Տվյալները բերված են ըստ Արաքս-Սուրմալու դիտակետի:

ԼՃԵՐԸ

միջին տարեկան ցուցանիշներ

	Մակարդակի նիշ, մ	Ծավալը	Հայելու մակերեսը, կմ²
Սևանա (2011)	1 900.19	37.8 կմ ³	1 275.6
Սև	2 666	9 մլն. մ ³	2.0
Ակնա	3 032	3.91 մլն.մ ³	0.8
Քարի	3 190	357 հազ. մ ³	0.3
Այդր	860	310 հազ. մ ³	0.03
Կապուտան	3 286	40.2 հազ. մ ³	0.1

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՋՐԻ ՀԱՅԵԼՈՒ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ

	Ծավալը, մլն. մ³	Հայելու մակերեսը, հա
Ախուրյան	525.0	4 180
Սպանդարյան	257.0	1 025
Թոլորս	96.0	480
Ապարան	91.0	735
Ազատ	70.0	285
Ջողազ	45.0	230
Հեր-Հեր	26.0	115
Կեչուտ	25.0	135
Կառնուտ	24.7	234
Գեղի	15.0	35
Շամբ	13.6	112
Հախում	12.0	83
Մանթաշ	8.2	76.4
Թավշուտ	6.0	60
Սևաբերդ	6.0	45
Ախպարա	5.6	170
Հայավար	5.5	38
Մեծավան	5.4	330
Տավուշ	5.3	40
Արփի	5.0	450
Վարդաքար	5.0	86
Սառնաղբյուր	4.9	56
Երևանյան	4.8	95
Ակնալիճ	3.9	53
Դավիթ Բեկ	2.5	14
Արծվաշեն	2.0	26
Գեղարդալիճ	1.5	25
Քարահունջ	1.3	18.3
Ծիլքար	1.2	26
Հացաշեն	1.1	37